

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՁԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉՆԴՆՈՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով նպաստել 1999 թվականի հունիսի 4-ին ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի որոշմամբ ընդունված ազատ առևտրի գոտու ձևավորման ուղղությամբ 1999 թվականի ապրիլի 2-ի՝ ԱՊՀ պետությունների ղեկավարների Խորհրդի՝ աշխատանքի հիմնական ուղղությունների կատարման վերաբերյալ որոշման իրականացմանը,

հիմնվելով 1993 թվականի հունվարի 22-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության Կանոնադրության դրույթների վրա,

ղեկավարվելով Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) համաձայնագրերի համակարգի եւ 1994 թվականի՝ "Առևտրի ու սակագների մասին" Գլխավոր համաձայնագրի (ԱՍԳՀ-94) սկզբունքներով,

նկատի ունենալով 1994 թվականի՝ "Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին" Համաձայնագիրը,

ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների անվտանգության ազգային շահերի պաշտպանության եւ միջազգային առևտրի զարգացման բարենպաստ պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունից,

ձգտելով Համագործակցության մասնակից պետություններում տեխնիկական կանոնակարգերի ու ստանդարտների մշակման, ընդունման ու կիրառման իրավական հիմքերի ապահովման համար համակարգված քաղաքականության, ինչպես նաեւ տեխնիկական

կանոնակարգերի, ստանդարտների ու տեխնիկական կանոնակարգերին ու ստանդարտներին ապրանքների համապատասխանության հավաստման ընթացակարգերի բնագավառում տեղեկատվական-տեղեկատու ծառայության գործառնության իրականացմանը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Համաձայնագրի նպատակների համար ստորեւ տրված տերմինները ունեն հետեւյալ նշանակությունը.

տեխնիկական միջոցներ առևտրում - տեխնիկական քաղաքականության միջոցներ, որոնք ներառում են ապրանքներին ներկայացվող պահպանման համար պարտադիր պահանջների սահմանումն ու գործողության մեջ դնելը, ինչպես նաեւ նշված պահանջներին ապրանքների համապատասխանության պարտադիր հավաստման ընթացակարգերի կիրառումը, տեխնիկական խոչընդոտներ առևտրում - ազգային եւ միջպետական տեխնիկական

կանոնակարգերի, ստանդարտների կամ համապատասխանության հավաստման ընթացակարգերի եւ միջազգային պրակտիկայում ընդունված տեխնիկական կանոնակարգերի ու ստանդարտների կամ համապատասխանության հավաստման ընթացակարգերի պահանջների տարբերությունները, որոնք ունեն ավելի մեծ սահմանափակող ազդեցություն, քան դա անհրաժեշտ է սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրություններով սահմանված՝ տեխնիկական կանոնակարգերի ու ստանդարտների մշակման նպատակներին հասնելու համար, եւ որոնք, դրա հետ կապված, հանգեցնում են միջազգային առևտրում եւ հայրենական շուկայում ապրանքների իրացման մեջ ավելորդ արգելքների, տեխնիկական կանոնակարգ - նորմատիվ փաստաթուղթ, որը հաստատվում (ընդունվում) է պետական իշխանության մարմնի կողմից եւ սահմանում է արտադրանքի կամ դրա հետ կապված արտադրության գործընթացներին եւ մեթոդներին ներկայացվող պարտադիր պահանջներ: Այն կարող է նաեւ ներառել տերմինաբանությանը,

պայմանանշաններին, փաթեթավորմանը, մակնիշավորմանը կամ պիտակավորմանը ներկայացվող պահանջներ կամ ամբողջությամբ վերաբերել այդ հարցերին,

ստանդարտ - նորմատիվ փաստաթուղթ, որը հաստատվում է լիազորված մարմնի կողմից եւ պարունակում է ապրանքներին կամ դրանց հետ կապված արտադրության գործընթացների ու մեթոդների նկատմամբ կիրառելի, համընդհանուր եւ բազմակի օգտագործման համար նախատեսված կանոններ, ցուցումներ կամ բնութագրեր, որոնց պահպանումը պարտադիր է: Այն կարող է ներառել կամ բացառապես բովանդակել պահանջներ տերմինաբանությանը, նշագրերին, փաթեթավորմանը, մակնիշավորմանը եւ պիտակավորմանը այնքանով, որքանով դրանք կիրառվում են ապրանքի, արտադրության գործընթացի կամ մեթոդի նկատմամբ,

միջազգային ստանդարտ - ստանդարտացմամբ զբաղվող միջազգային կազմակերպության կողմից ընդունված եւ սպառողների ու օգտվողների լայն շրջանին մատչելի ստանդարտ,

միջպետական ստանդարտ - Կողմերի ընդունած եւ օգտվողների լայն շրջանին մատչելի տարածաշրջանային ստանդարտ,

ազգային ստանդարտ - Կողմի պետական ստանդարտ, որն ընդունված է ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով եւ մատչելի է օգտվողների լայն շրջանին,

համապատասխանության հավաստում - գործունեություն, որի արդյունքը փաստաթղթային վկայական է (համապատասխանության հավաստագիր կամ համապատասխանության մասին հայտարարագիր), որով հավաստվում է, որ արտադրանքը կամ ծառայությունը համապատասխանում է սահմանված պահանջներին,

համապատասխանության պարտադիր հավաստում - համապատասխանության հավաստում,

որը ներդրվում է Կողմերի ազգային օրենսդրություններով որոշակի արտադրանքի եւ ծառայությունների համար եւ կատարվում է պարտադիր կարգով, որպես կանոն, այդպիսի արտադրանքի կամ ծառայության անվտանգությունն ապահովող պարտադիր նորմատիվ պահանջներին համապատասխան,

մատակարարող - տնտեսավարող սուբյեկտ, որը ներկայացնում է արտադրանքի իրացման համար, պատասխանատու է դրա որակի եւ անվտանգության համար.

շահագրգիռ մարմիններ - Կողմի գործադիր իշխանության պետական մարմիններ կամ տնտեսավարող սուբյեկտներ, որոնք կիրառում են կամ մտադիր են կիրառել տեխնիկական կանոնակարգը կամ ստանդարտը:

ՅՈՒՐԱԾ 2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

Տեխնիկական կանոնակարգերին են դասվում՝

Կողմի ազգային նորմատիվ իրավական ակտերը, որոնք սահմանում են պարտադիր պահանջներ արտադրանքի կամ դրա հետ կապված արտադրության գործընթացների ու մեթոդների նկատմամբ,

միջպետական, ինչպես նաեւ ազգային (պետական) ստանդարտները՝ դրանցում Կողմերի ազգային օրենսդրություններին համապատասխան ապրանքների կամ դրանց հետ կապված արտադրության գործընթացների ու մեթոդների նկատմամբ սահմանվող պարտադիր պահանջների մասով:

Կողմի (դաշնային կառուցվածք ունեցող պետությունների համար՝ դաշնության սուբյեկտի տարածքում) վարչատարածքային միավորի տարածքում բնակվող բնակչության կյանքի ու առողջության համար վտանգ առաջացնող գործոնների առկայության ժամանակ, ինչպես նաեւ շրջակա միջավայրին վնաս հասցնելու սպառնալիք ստեղծող հատուկ աշխարհագրական եւ կլիմայական պայմանների առկայության դեպքում, Կողմի պետական իշխանության կամ վարչատարածքային միավորի իշխանության մարմինները (դաշնային կառուցվածք ունեցող պետությունների համար՝ դաշնության սուբյեկտի իշխանությունը) իրավունք, ունեն ազգային օրենսդրությանը համապատասխան, իրենց կողմից ընդունվող տեխնիկական կանոնակարգերում սահմանել համազգային մակարդակով ընդունված տեխնիկական կանոնակարգերի համեմատ ավելի բարձր, ինչպես նաեւ լրացուցիչ պահանջներ:

ՀՈՂՎԱԾ 3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Տեխնիկական կանոնակարգերը առևտրում չպետք է ստեղծեն ավելի սահմանափակող ներգործություն, քան դա անհրաժեշտ է հետեւյալ նպատակների ապահովման համար՝

- ազգային անվտանգություն, այդ թվում՝ տնտեսական եւ արդյունաբերական,
- քաղաքացիների կյանքի ու առողջության պաշտպանություն,
- շրջակա բնական միջավայրի (այդ թվում՝ կենդանական եւ բուսական աշխարհի) պահպանություն, բնական ռեսուրսների եւ էներգաապահովման ռացիոնալ օգտագործում,
- խաբեության պրակտիկայի կանխարգելում (ապրանքների ու ծառայությունների նշանակության, որակի կամ անվտանգության վերաբերյալ սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունների կանխարգելում):

2. Տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակ Կողմերը որպես հիմք օգտագործում են միջազգային ստանդարտները կամ դրանց՝ մշակման վերջին փուլում գտնվող նախագծերը, բացառությամբ այն դեպքերի, երբ միջազգային ստանդարտները կամ դրանց նախագծերը չեն ապահովում նշված նպատակներին հասելը:

ՀՈՂՎԱԾ 4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Կողմերը Նոր տեխնիկական կանոնակարգեր մշակելիս կամ գործող կանոնակարգերում փոփոխություններ կատարելիս պարտավորվում են այդ մասին ծանուցումներ տեղադրել պաշտոնական տպագիր հրատարակություններում, որպեսզի Կողմերի շահագրգիռ մարմինները հնարավորություն ունենան ծանոթանալու դրանց:

2. Նոր տեխնիկական կանոնակարգեր մշակելիս կամ գործող կանոնակարգերում փոփոխություններ կատարելիս, որոնք կարող են ազդել Կողմերի առևտրի վրա, տեխնիկական կանոնակարգ մշակող Կողմը տեղեկատվական-տեղեկատու կենտրոնի միջոցով

ծանուցում է մյուս Կողմերին այդ տեխնիկական կանոնակարգի (փոփոխության) մեջ ընդգրկված ապրանքների մասին, ապահովում է տեխնիկական կանոնակարգի (փոփոխության) պատճենով եւ/կամ նշված տեխնիկական կանոնակարգի, ստանդարտի (Կողմերից յուրաքանչյուրի հարցմամբ՝ փոփոխության) ընդունման վերաբերյալ հիմնավորումով: Միջազգային ստանդարտներին համապատասխանող տեխնիկական կանոնակարգ մշակելիս ներկայացվում է միայն տեղեկություն այդպիսի համապատասխանության մասին:

3. Շահագրգիռ Կողմերը կարող են տեխնիկական կանոնակարգ մշակող Կողմին ուղարկել գրավոր դիտողություններ տեխնիկական կանոնակարգի նախագծի վերաբերյալ, բայց ոչ ուշ, քան սույն հոդվածի 1-ին կետում նշված հրատարակման օրվանից 3 ամիս հետո:

4. Արտակարգ հանգամանքներով պայմանավորված (անվտանգության, քաղաքացիների կյանքի ու առողջության, շրջակա բնական միջավայրի կամ ազգային անվտանգության սպառնալիք)՝ տեխնիկական կանոնակարգ օպերատիվ կերպով մշակելու, ընդունելու եւ գործադրելու անհրաժեշտության դեպքում տեխնիկական կանոնակարգ մշակող Կողմը իրավունք ունի այդ ժամանակահատվածում հրաժարվել սույն հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները ամբողջ ծավալով կատարելուց:

Այս դեպքում Կողմերը ծանուցվում են տեխնիկական կանոնակարգի մշակման մասին՝ նշելով արտակարգ հանգամանքները, ինչպես նաեւ նրանց խնդրանքով տրամադրվում են տեխնիկական կանոնակարգերի պատճենները՝ իրենց գրավոր դիտողությունները ներկայացնելու նպատակով:

5. Կողմերը հրապարակում են տեղեկություն տեխնիկական կանոնակարգերի հաստատման (ընդունման) եւ իրենց տարածքներում դրանց գործադրման մասին՝ դրանք հաստատելուց (ընդունելուց) հետո երկու շաբաթվա ընթացքում:

Հաստատված (ընդունված) տեխնիկական կանոնակարգերի հրապարակումը իրականացվում է ոչ ուշ, քան դրանք ընդունելուց 30 օր հետո:

Տեխնիկական կանոնակարգերի հաստատման (ընդունման) եւ դրանց գործադրման ժամկետների միջեւ նախատեսվում է ժամանակաշրջան, որն անհրաժեշտ է արտադրանքին կամ դրա արտադրության մեթոդներին ներկայացվող պահանջների պահպանումն ապահովող միջոցառումների իրականացման համար, եւ որոշվում է տեխնիկական կանոնակարգը ընդունող (հաստատող) պետական իշխանության ազգային մարմնի կողմից՝ շահագրգիռ մարմինների առաջարկություններով:

6. Կողմերը ուժի մեջ չեն թողնում տեխնիկական կանոնակարգերը կամ դրանցում կատարում են փոփոխություններ, եթե դրանց ընդունումը պայմանավորող հանգամանքները եւ նպատակները վերացել կամ փոփոխվել են, եւ այդ մասին հրատարակում են տեղեկություն:

7. Տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտների եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մասին տեղեկությունը, ինչպես նաեւ այդ փաստաթղթերը ներկայացվում են ռուսերեն:

ՅՈՒՐԱԿԱՆ 5. ԱԶԳԱՅԻՆ (ՊԵՏԱԿԱՆ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻՆ ՈՒ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՈՒ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Միջազգային եւ երրորդ պետությունների ազգային (պետական) տեխնիկական կանոնակարգերն ու ստանդարտները կարող են ճանաչվել Կողմի ընդունած (հաստատած) տեխնիկական կանոնակարգերին համարժեք այն դեպքերում, եթե նշված փաստաթղթերը՝ չեն հակասում ազգային օրենսդրության պահանջներին,

նույն ձևով եւ նույն ծավալով նպաստում են գործող ազգային (պետական) տեխնիկական կանոնակարգերով ու ստանդարտներով նախատեսված նպատակների իրականացմանը:

2. Միջազգային եւ երրորդ պետությունների ազգային (պետական) տեխնիկական կանոնակարգերի ու ստանդարտների՝ ազգային (պետական) տեխնիկական կանոնակարգերին ու ստանդարտներին համարժեք ճանաչումը իրականացվում է Կողմերի գործադիր իշխանության ազգային (պետական) այն մարմինների կողմից, որոնց իրավասության մեջ է մտնում ապրանքների եւ դրանց հետ կապված արտադրության գործընթացների ու մեթոդների նկատմամբ պարտադիր պահանջների սահմանումը:

ՅՈՒՐԱԿԱՆ 6. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄԸ

Կողմերը տեխնիկական կանոնակարգեր մշակելիս որպես հիմք կիրառում են միջազգային եւ ազգային (պետական) այն ստանդարտները, որոնք ներդաշնակեցված են միջազգային ստանդարտներին ամբողջությամբ կամ մասամբ տեքստի մեջբերման կամ միջազգային ու ազգային (պետական) ստանդարտների վկայակոչման միջոցով:

ՅՈՒՐԱԿԱՆ 7. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՈՒ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

1. Տեխնիկական կանոնակարգերի մշակման աշխատանքների ծրագրերը, որոնք հաստատված (ընդունված) են Կողմի գործադիր իշխանության ազգային (պետական) մարմինների կողմից, ուղարկվում են մյուս Կողմերի գործադիր իշխանության բոլոր շահագրգիռ մարմիններին:

2. Կողմերից մեկի կողմից տեխնիկական կանոնակարգի մշակումը սկսելու մասին 4 հոդվածի 1-ին կետին համապատասխան հրապարակված պաշտոնական տեղեկության առկայության դեպքում մյուս Կողմերը, որպես կանոն, ձեռնպահ են մնում համանման տեխնիկական կանոնակարգ կամ ստանդարտ մշակելուց: Միաժամանակ, մյուս Կողմերին

պետք է հնարավորության տրվի մասնակցելու այդ մշակմանը:

ՅՈՒՐԱԾ 8. ԱՌԵՎՏՐՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉՆԴՈՏՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

1. Կողմերը իրականացնում են միջոցառումներ իրենց պետություններում միասնական տեղեկատվական-տեղեկատու կենտրոնների ստեղծման ու զարգացման ուղղությամբ, որոնք շահագրգիռ մարմինների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց հարցումներով կներկայացնեն այնպիսի տեղեկություն եւ փաստաթղթերի պատճեններ, որոնք վերաբերում են՝

պետությունում հաստատվող (ընդունվող) կամ մշակվող տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին,

Կողմի տարածքում գործող կամ գործադրման պլանավորված տեխնիկական կանոնակարգերին կամ ստանդարտներին համապատասխանության հավաստման ընթացակարգերին,

ստանդարտացման միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպություններում կամ համապատասխանության հավաստման համակարգերում, ինչպես նաեւ այդ հարցերով երկկողմ կամ բազմակողմ միջազգային համաձայնագրերում պետության անդամակցությանը եւ մասնակցությանը,

տպագիր հրատարակություններին, որոնցում հրապարակվում են սույն Յամաձայնագրի 4 հոդվածում նշված ծանուցումները:

2. Կողմերը ստեղծում եւ կանոնավոր կերպով նորացնում են տեղեկատվական ռեսուրսները (տվյալների բանկեր եւ բազաներ) սույն Յամաձայնագրի տվյալ հոդվածի 1-ին կետում նշված հարցերով:

3. Կողմերը ապահովում են սույն Յամաձայնագրի տվյալ հոդվածի 1-ին կետում նշված տեղեկության եւ փաստաթղթերի պատճենների ներկայացման համար վճարի միասնական չափ (առանց հաշվի առնելու փաստաթղթերը տեղ հասցնելու ծախսերը) բոլոր Կողմերի ստացողների համար:

4. Կողմերի գրավոր դիտողությունները ստանալու համար, սույն Յամաձայնագրով նախատեսված դեպքերում, տեխնիկական կանոնակարգերի ու ստանդարտների նախագծերի ներկայացումը իրականացվում է այդ կանոնակարգերն ու ստանդարտները մշակող Կողմի ազգային (պետական) տեղեկատվական-տեղեկատու կենտրոնի միջոցով:

ՅՈՒՐԱԾ 9. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏՈՒՄ

1. Մյուս Կողմի տարածքում արտադրվող արտադրանքի մատակարարների նկատմամբ մշակվող, սահմանվող ու կիրառվող համապատասխանության պարտադիր հավաստման ընթացակարգերը պետք է լինեն այնպիսին, ինչպիսին հայրենական արտադրության համանման արտադրանքի մատակարարների համար են:

2. Համապատասխանության պարտադիր հավաստման ընթացակարգերի սահմանումը իրականացվում է համաձայն այդպիսի ընթացակարգերի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների ցուցումների ու հանձնարարականների: Այդպիսի ընթացակարգերի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների ցուցումների ու հանձնարարականների բացակայության դեպքում համապատասխանության պարտադիր հավաստման ընթացակարգերի սահմանումը իրականացվում է սույն Յամաձայնագրի 4 հոդվածի 1-7-րդ կետերով նախատեսված դրույթների հիման վրա:

ՅՈՒՐԱԾ 10. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ

1. Համապատասխանության պարտադիր հավաստման արդյունքների ճանաչման ընթացակարգերը որոշվում են Կողմի գործադիր իշխանության ազգային /պետական/ այն մարմինների կողմից, որոնց իրավասության մեջ է մտնում համապատասխանության պարտադիր հավաստման աշխատանքների կազմակերպումը եւ անցկացումը:

2. Երրորդ երկրների հավաստագրերի, փորձարկումների արձանագրությունների եւ համապատասխանության նշանների ճանաչումը մտնում է Կողմի գործադիր իշխանության համապատասխան պետական մարմնի իրավասության մեջ:

3. Համապատասխանության պարտադիր հավաստման արդյունքների եւ Կողմերի կողմից տրված հիգիենիկ, անասնաբուժական եւ այլ բնույթի համապատասխանության հավաստման այլ փաստաթղթերի, ներառյալ՝ բնապահպանական եւ ճառագայթային անվտանգության ճանաչման, հարցերը յուրաքանչյուր Կողմ լուծում է ինքնուրույն:

ՀՈՂՎԱԾ 11. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՄԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի 2 հոդվածին համապատասխան՝ Կողմերի սուբյեկտների կողմից տեխնիկական կանոնակարգերի մշակման ու ընդունման դեպքում դրանք ներկայացվում են անմիջականորեն իրենց տեղեկատվական-տեղեկատու կենտրոն:

ՀՈՂՎԱԾ 12. ԿՈՂՄԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԾԱԳԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՈՒ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՌԵԺԻՄԸ

1. Յուրաքանչյուր Կողմ կիրառում է տեխնիկական կանոնակարգերը ու ստանդարտները հավասար չափով եւ նույն ձեւով, ինչպես իր, այնպես էլ մյուս Կողմերի տարածքներից ծագած ապրանքների նկատմամբ:

2. Եթե տեխնիկական կանոնակարգը կամ ստանդարտը հաստատած (ընդունած) Կողմի պետական իշխանության մարմինը հայտ է ստանում այդ կանոնակարգը կամ ստանդարտը առեւտրի համար, այդ թվում՝ միջազգային, որպես արգելք օգտագործելու կամ օգտագործելու հնարավորության մասին, ապա նա անհապաղ ձեռնարկում է այդպիսի կիրառումը բացառող միջոցներ՝

անհրաժեշտության դեպքում՝ տեխնիկական կանոնակարգի կամ ստանդարտի դրույթների ճշգրտում,

տեխնիկական կանոնակարգով կամ ստանդարտով սահմանված սահմանափակումների կիրառման կարգն ու պայմանները պարզաբանող պաշտոնական մեկնաբանության հրապարակում՝ ազատ առեւտրի գոտում արգելքների առավելագույն հնարավոր վերացման նպատակներով:

ՀՈՂՎԱԾ 13. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման պետական հսկողությունը եւ վերահսկողությունը իրականացվում են Կողմերի ազգային օրենսդրական ակտերով սահմանված կարգով եւ պայմաններով:

2. Շահագրգիռ մարմինների կողմից Կողմերի հաստատած (ընդունած) տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման պետական հսկողությունը եւ վերահսկողությունը իրականացվում է արտադրանքի արտադրության, դրա նախապատրաստման, վերամշակման, շրջանառության (պահման, փոխադրման), արտադրանքի

ներմուծման եւ արտահանման գործարքների (պայմանագրերի) կնքման ու կատարման, սպառման (շահագործման, օգտագործման), վերականգնման (տրոգման), օգտահանման, օգտագործված կամ չօգտագործված արտադրանքի ոչնչացման կամ թաղման փուլերում:

ՀՈՂՎԱԾ 14. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Կողմերի գործադիր իշխանության ազգային (պետական) մարմինների կողմից տեղեկատվական ռեսուրսների (տվյալների բանկեր եւ բազաներ) ստեղծումը, տեխնիկական կանոնակարգերի ու ստանդարտների մշակումը, ինչպես նաեւ տեխնիկական

կանոնակարգերի պահպանման պետական հսկողությունը եւ վերահսկողությունը ֆինանսավորվում են Կողմերի պետական բյուջեից այդ նպատակների համար հատկացված միջոցների հաշվին ու սահմաններում: Ընդ որում, նշված նպատակների համար հնարավոր է շահագրգիռ կազմակերպությունների եւ բյուջեից դուրս այլ ֆինանսավորման աղբյուրների սեփական միջոցների ներգրավում:

ՀՈՂՎԱԾ 15. ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԵՏ

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում այլ միջազգային պայմանագրերին համապատասխան Կողմերի ընդունած իրավունքներն ու պարտավորությունները:

ՀՈՂՎԱԾ 16. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, իսկ այն պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարում՝ նշված ընթացակարգերի կատարման մասին ավանդապահին ծանուցումը ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈՂՎԱԾ 17. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Սույն Համաձայնագրում Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Արձանագրությունները գործողության մեջ են մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով եւ հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈՂՎԱԾ 18. ՎԻՃԵԼԻ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի բանակցությունների ու խորհրդակցությունների միջոցով:

Բանակցությունների միջոցով վիճելի հարցերի կարգավորման անհնարինության դեպքում Կողմերը դիմում են Անկախ Պետությունների Համագործակցության տնտեսական դատարան կամ իրավասու այլ միջազգային դատարաններ, ըստ համաձայնության:

ՀՈՂՎԱԾ 19. ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

ՀՈՂՎԱԾ 20. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՑՈՒՄԸ

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին, ոչ ուշ, քան դուրս գալուց 6 ամիս առաջ, կարգավորելով սույն Համաձայնագրից դուրս գալու կապակցությամբ առաջացած պարտավորությունները:

Ավանդապահը մեկամսյա ժամկետում ծանուցում է սույն Համաձայնագրի բոլոր մասնակիցներին Համաձայնագրից դուրս գալու մասին:

ՀՈՂՎԱԾ 21. ՄԻԱՑՈՒՄԸ

Սույն Համաձայնագիրը բաց է նրա նպատակներն եւ սկզբունքներն ընդունող, ազատ առեւտրի գոտում մասնակցող այլ պետությունների միանալու համար՝ ավանդապահին միանալու վերաբերյալ փաստաթղթերի հանձնման միջոցով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2000 թվականի հունիսի 20-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը դրա հաստատված պատճենը կուղարկի սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի 25-ից: